Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀՐԱԶԴԱՆԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՅԱՆ ԲԱՆԿ» ՊՓԲԸ ՄԻՋԵՎ 27.02.2020թ. ԿՆՔՎԱԾ «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԵՎ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» N ՀՀ ԱՆ ՄԱԾՁԲ-2020/12-2 ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար Լուսինե Քոչարյանի մի կողմից, և «Հրազդանի մարզային արյան բանկ» ՊՓԲԸ (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Թադևոս Սեյրանյանի, մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 27.02.2020թ. կնքված «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին» N ՀՀ ԱՆ ՄԱԾՁԲ-2020/12-2 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.2 կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի Հավելվածներ 2-ում և 4-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հավելված 2-ի աղյուսակի «2020 թվականի պայմանագրային գումար» սյունակի, Հավելված 4-ի «ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԳՈՒՄԱՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՄՍԱԿԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» և «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» աղյուսակների «Ընդամենը՝ տարի» սյունակների «13,715.8» թվի փոխարեն սահմանել «19,317.0» թիվը, իսկ Հավելված 4-ի աղյուսակների «դեկտեմբեր» սյունակների «1,523.9» թիվը փոխարինել «7,125.1» թվով:

2. Սույն Համաձայնագիրն՝

1) ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2) գործողության ժամկետով տարածվում է 2020 թվականի հոկտեմբերի 1-ից սկսած ժամանակահատվածի վրա և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

Պատվիրատու՝ առողջապահության նախարարություն	Կատարող՝ «Հրազդանի մարզային արյան բանկ» ՊՓԲԸ
Հասցե՝ Երևան, Կառավարական տուն 3	Հասցե՝ ք. Հրազդան, Ղուկասյան 40
Սպասարկող բանկ՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Սպասարկող բանկ՝ «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Բանկային հաշիվ՝ 900011105088	Բանկային հաշիվ՝ 163158011094
ՀՎՀՀ 02507171	ՀՎՀՀ 03008953
Առողջապահության նախարարության գլխավոր քարտուղար՝ Լուսինե Քոչարյան	«Հրազդանի մարզային արյան բանկ» ՊՓԲԸ-ի տնօրեն՝ Թադևոս Սեյրանյան
KOCHARYAN LUSINE 6509770407 Подписано: KOCHARYAN LUSINE 6509770407 DN: cn=KOCHARYAN LUSINE 6509770407, c=AM Дата: 2020.12.04 15:18:31 +04'00' (ստորագրություն)	Digitally signed by SEYRANYAN TADEVOS 3203610159 Date: 2020.12.03 19:38:53 GMT+04:00 (ստորագրություն)
Հեռ. 060 808 003 E-mail: info@moh.am	Հեռ. 093 535 457 E-mail: blood-bank@rambler.ru